բլուր «Մանղակունի» անուամբ , որին և բնակիչքն «Մանղախունի» ասեն . և Պարսիկքն՝ Զարնջի ։ Ես եւս վայելեցի այս ջրից շատ անգամ տեղւոյն Արժ - Կարապետ քահանայի տանը։ Քարքանջ գիւղի վերեւ և այգեաց մէջ եղած բլրակի վերեւ Սարքու անունով տեղում կայ Նահատակ անուամբ սրբատեղ ։

Քարքանջու եկեղեցւոյ հիւսիսային դրան ճակատին գըրուած է ։

''Կառուցաւ սուրբ տաճարս յանուն սրբուհւոյ Աստուածածնի՝ հիմնադրութեամբ ի սէր ազգի Տամախանեան Յարութիւնի Ղազարեան եւ կատարեցաւ ի ձեռն ժառանգի նորին Մարգարէի , 1848 նոյեմբերի 4'' :

1848 թուին Քարքանջու եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ արեւմտեան հիւսիս անկիւնի հիման ներքոյ գտնուել են մի քանի պղնձեայ եկեղեցական անօթներ , զորօրինակ։

1. Քշոց , որոյ երկու կողմանց միջակէտին գրուած է.

''Սարղարին եւ Նաղուրին" .

Իսկ շրջապատումը գրած Հրեշտակապետաց դձ. Ճարականը.

''Պահապանք աշխարհի , բանակք Տեառն շուրջ զերկիւղածովք , բարեկամք ազգի մարդկան , միջնորդք մահու եւ յարութեան Միքայէլ եւ Գաբրիէլ մեծք , որ կայք միշտ առաջի ամենասուրբ Երրորդութեան , աղաչեմք զձեզ բարեխօս լերուք առ Տէր վասն քաւութեան մեղաց մերոց":

2. Խնկատուփ որոյ երեսին գրած.

''Յիշատակէ Թուխիկին ի դուռն Քարքանջու եկեղեցուն"։

3. Իբրուղ լուացւելու, որոյ երեսին գրուած է։

''Թումանի որդի Օվասափին ի դուռն Քարքանջու եկեղեցուն"